

Արտատպված Է՝ Շոլոմ-Ալեյխեմ, Վիպակներ և պատմվածքներ, Ե., Հայպետհրատ, 1964: Ռուսերենից թարգմանեց՝ Օլգա Սանահյանը:

ՄԵԶԱՆԻՑ ՀԵՌՈՒ ԼԻՆԻ...

Չեյդը՝ ռեբ Շայայի որդին, երիտասարդ մի մարդ, ապրում է հոր ունեցվածքով, մատը մատին չի տալիս, օրեր շարունակ տքնում է թալմուդի վրա, չնայած որ արդեն ընտանիքի հայր է: Եվ ինչո՞ւ իրեն հոգսի տակ դնի, երբ ինքը միակ որդին է, իսկ Շայան՝ հարուստ, և հարյուրքսան տարի հետո նրա ամբողջ ունեցվածքը անցնելու է իրեն:

Ռեբ Շայան իր ամբողջ կյանքում եղել էր վաշխառու: Նրա «կապիտալը» ցրված էր քաղաքով մեկ: Կասրիլովկայում չկար մի մարդ, որ պարտք չլիներ ռեբ Շայային: Եվ այդ էր պատճառը, որ նրա տունը ամբողջ ժամանակ եռում էր ինչպես կաթսան. մեկը՝ մտնում էր, մյուսը՝ ելնում, մեկից ստանում էր, մյուսին՝ տալիս:

Նրան, ներեցեք համեմատությանս համար, ուներ «գրասենյակ», «բանկ»: Բանկ, բայց առանց ներկած սեղանների ու սեղանիկների, առանց սպիտակ վզնոցավոր, գանգրացրած բեղերով, երկար եղունգներով բազմաթիվ ծառայողների, առանց վանդակապատ փոքրիկ պատուհանների, առանց երկաթե գանձարանների, առանց գրոսբուխների և ընթացիկ հաշվեմատյանների, որոնցից ամեն մեկով կարելի էր մարդ սպանել:

Ռեբ Շայայի տանը կար միայն մի փոքրիկ սեղան, սեղանի վրա՝ թանաքաման՝ ավագի տուփով, և ամեն անգամ, երբ հարկ էր լինում որևէ բան գրել, պետք էր լինում թքել թանաքամանի մեջ, որովհետև այլ կերպ չէր ցանկանում թանաք տալ:

Սեղանն ուներ և մի շարժական դարակ՝ իր մեծ կողպեքով, որ կախված էր օղակներից: Այնտեղ, դարակում պահվում էր այն դավթարը, ուր գրվում էին բոլոր հաշիվները, որոնք ռեբ Շայան վարում էր անձամբ՝ համաձայն իր սեփական հաշվապահական սխտեմի: Ձեզ, միգուցե, հետաքրքրի այդ սխտեմը.

Դավթարը բաղկացած էր հիսուներկու էջից¹, յուրաքանչյուր էջ որպես վերնագիր ուներ տորայի բաժիններից մեկի անունը, բաժին, որ նշանակված էր ընթացիկ շաբաթվա մեջ կարդալու համար, իսկ մեջտեղով վերից վար անցնող գծով բաժանված էր երկու մասի, մի մասում նշված է՝ «ստացված է», մյուս մասում՝ «տրված է»։ Նշումներն ունեին այսպիսի

Ստացված է իմ կողմից ռեբ Գերշն Պուլաիկից համաձայն «Սկիզբն»² բաժնի ստորագրության՝ 2 ռուբ. արծաթով:

Ստացված է իմ կողմից ռեբ Ֆայվլ Շմոյսից համաձայն «Թիւք» բաժնի ստորագրության 4 ռուբ. արծաթով:

Ստացված է իմ կողմից ռեբ Սիմխե-Լեմելշկայից 1 ռուբ. արծաթով:

Չի ստացված իմ կողմից ռեբ Գերշն Պուլաիկից համաձայն «Նոյ» բաժնի, և նույնպես չի ստացված համաձայն «Ելք» բաժնի:

Տրված է իմ կողմից Ռեբ Սիմխե-Լեմելշկային համաձայն «Թիւք» բաժնի ստորագրության 13 ռուբ. արծաթով:

¹ Հիսուներկու էջից... — համաձայն տարվա հիսուներկու շաբաթների:

² «Սկիզբն» «Թիւք», «Նոյ» Հնգեմատյանի բաժինների վերնագրերը, որ նախատեսված են ընթերցելու համապատասխան շաբաթների ընթացքում: Ամբողջ հնգեմատյանը բաժանված է առանձին բաժինների՝ ըստ տարվա շաբաթների թվի:

Տրված է իմ կողմից լրացուցիչ՝ ռեբ Գերշն Պուլպիկին 7 ռուբ. արծաթով:

Չի տրված լրացուցիչ ռեբ Ֆայվլ Շմոյսին 12 ռուբ. արծաթով, քանզի դոքա կկորչեն:

Խոստացված է իմ կողմից ռեբ Սիմխեին լրացուցիչ տալ 11 ռուբ. արծաթով:

Թե ռեբ Շայան ինչպես էր կարողանում գլուխ հանել այդ հաշիվներից, միայն աստծուն է հայտնի: Սակայն մի վշտացեք. չէր եղել ոչ բողոք, ոչ դատ ու դատաստան: Յուրաքանչյուր պարտատեր գիտեր,— եթե դադարեր վճարելուց, իսկույն ևեթ վստահությունը Շայայի մոտ կկորցներ, և այդ ժամանակ նա կործանված էր...

Եվ այսպես անիվը պտտվում էր ու պտտվում երկար տարիներ ոչ մի բոպե դադար չառնելով այնքան ժամանակ, մինչև որ...

Մինչև որ ռեբ Շայան մեռավ:

Ռեբ Շայան մեռավ, և Չեյդը՝ որդին ռեբ Շայայի, ընդունեց գործը:

Երեսնորյա սուգ պահելուց հետո Չեյդը ամենից առաջ ձեռքն առավ հաշվեմատյանները, երեք շաբաթ շարունակ գրում էր, գրում, հաշվում, և վերջապես իր մոտ հավաքեց հոր բոլոր պարտապաններին և դիմեց նրանց.

— Հարգելիներս, ցանկանում եմ հայտնել ի գիտություն, որ այս ամբողջ ժամանակ ես զբաղված էի ձեր հաշիվներով: Հաշվեցի, հաշվեցի և վերջապես ստացվեց այն, որ ձեզնից ստանալիք չունեմ: Դուք պարտք չեք:

— Ի՞նչ է նշանակում — ձեզնից ստանալիք չունեմ: Ի՞նչ է նշանակում— դուք պարտք չունեք:

— Այն, որ «համաձայն ալգեբրայի», դուք տոկոսներ եք վճարել, դեռ տոկոսների տոկոսներ՝ տասնյոթ անգամ և դրան ավելացրած՝ երեք տասնվեց. այսինքն՝ վճարել եք ավելի շատ, քան դուք պարտք եք եղել: Ե՛տ վերցրեք ձեր ստացականները:

Լսելով այսպիսի խոսքեր, կասրիլովցիները ծայր աստիճան վրդովվեցին: Նրանք կարծում էին, թե այդտեղ անպայման մի ինչ-որ խարդախություն, ինչ-որ ծուղակ է թաքնված. սատանայություն, ուրիշ ոչինչ: Նրանք Չեյդի երեսին շարտեցին իրենց ստացականները և դժգոհության աղաղակներ բարձրացրին.

— Նա ուզում է մեզ մորթել: Անդանակ մորթել: Ռեբ Շայան, թող հոգին փառավորվի, դրախտում, այսքան տարի հաշիվ էր վարում մեզ հետ, նրա գրպանը միշտ բաց է եղել մեզ համար, իսկ սա լույս է ընկել, ուզում է մեզ նստեցնել ճահիճի մեջ:

— Հիմարներ,— ի պատասխան գոչում է Չեյդը,— ախր, դուք հիմարներ չե՞ք, ավանակներ չե՞ք: Ձեզ ասում են, որ դուք պարտք չունեք, դա, ախր, հո գլխիցս չե՛մ դուրս տալիս, դա ասում եմ «ալգեբրայի հիման վրա»:

— Ի՞նչ է հեքիաթներ պատմում «ալգեբրա»: Եկեք դիմենք ուրիշներին, եկեք գնանք ռաբբիին հարցնենք:

— Ռաբբիի՛ն, ռաբբիի՛ն,— միաձայն գոչեցին ամենքը և ճամփա ընկան ռաբբի՝ ռեբ Իոիզեֆի մոտ:

Ռաբբիի մոտ հավաքվեց համարյա ամբողջ քաղաքը: Աներևակայելի աղմուկ էր, գոռում-գոչումները երկինք էր առել:

Չեյդը ոչ ոքի չընդհատեց. թող յուրաքանչյուրն ասի, ինչ ցանկանում է, և միայն այն բանից հետո, երբ ամենքը քեֆներն ուզածի չափ գոռգոռացին, նա խնդրեց բոլորին մի կարճ ժամանակով ռաբբիի հետ իրեն թողնել մենակ, ինքը նրան բան ունի ասելու և երես առ երես ուզում է խոսել:

Թե ինչ տեղի ունեցավ Չեյդի և ռաբբիի՝ ռեբ Իփզեֆի միջև, ոչ ոք չգիտի:

Ասում են, որ Նրանք երկար վիճաբանում էին: Չեյդը ապացուցում էր, որ տոկոսներ վերցնելը հանցագործություն է, որովհետև փիլիսոփայորեն դատելով, տոկոսներ գանձելը ավագակություն է. այն մարդը, որն ապրում է տոկոսներով, ասում էր նա, ստորներից ստորն է, ստացվում է այն, ասում էր նա, որ բոլորը պարտավոր են նրա համար աշխատել: Որտե՞ղ է արդարությունը:

Ռաբբի ռեբ Իփզեֆը փորձում էր նրան առարկել՝ զինվելով ռաբբիական «օրինականացված» հեղինակությամբ ու հենվելով «աշխարհում սահմանված կարգ ու կանոնի» վրա, առանց որի աշխարհը, որպես թե գոյություն ունենալ չէր կարող, և այլն և այլն: Դրան Չեյդը պատասխանեց, որ իր դատողությամբ այդպիսի «սահմանված կարգ ու կանոն» ոչ մի կարգ ու կանոն էլ չէ, և որ իրեն դուր չի գալիս ո՛չ այդ աշխարհը և ո՛չ էլ այն ամենը, ինչով կառավարվում է աշխարհը:

— Սա ի՞նչ աշխարհ է,— հարցնում էր նա ռաբբի ռեբ Իփզեֆին:— Եթե ես սոված լինեմ և մի գրոշանոց կարկանդակ թռցնեմ, կասեն, որ այդ գողություն է, իսկ թալանել քաղաքի որբերին ու այրիներին, գրկել նրանց վերջին պատառից, դա նշանակում է «սնանկանալ»: Մի կտրված մատի համար սահմանված է «Սիբիրի տաժանակրություն», իսկ այն սպանդանոցի համար, երբ Աֆրիկայում ինչպես անասունների մորթեցին ութսուն հազար անգլիացու, «մենդալ» են տալիս խիզախության համար...

— Ա՛յդ է արդարությունը,— ասում էր նա ռաբբի ռեբ Իփզեֆին՝ բռնելով նրա պարեգոտի մերակից:— Ա՛յդ է արդարությունը: Ահա խեղճ ծերունի Կոյուզերը՝ բուրերի թագավորը, շրջում է երկրից երկիր և ծեծում բոլոր դռները, գթություն աղերսում իր երկրի համար. նա ցանկանում է միայն մի բան — արդար դատաստան, նա ցանկանում է իր դատը վստահել մարդկանց, թող նրանք որոշեն: Բայց մեկն ասում է, թե չի ցանկանում խառնվել: Մյուսը՝ անհարմար է զգում նրանց առջև... Սա՛ այսպես, մյուսը՝ այնպես, մինչդեռ արյուն է հոսում: Որտե՞ղ է արդարությունը, ես հարցնում եմ ձեզ, որտե՞ղ է մարդասիրությունը: Իսկ դուք ինձ ասում եք «աշխարհի հիմքը», «աշխարհի օրենքը», «աշխարհի կարգը»: Լա՛վ հիմք է: Լա՛վ աշխարհ է:

Եվ շատ նման անհեթեթություններ փիլիսոփայեց Չեյդը ռաբբիի հետ խոսելիս, խցկվեց, ինչպես ասում են, բարձրագույն մատերիայի մեջ, խուճ ճամփաներով՝ անմատչելի թավուտները, սկսեց ժխտել «իմը» և «քոնը» և «ընդհանուրը», սկսեց ամեն ինչ ծաղրաճանակի ենթարկել և ասել այնպիսի բաներ, որոնցով դեմ էր դուրս գալիս և՛ աստծուն, և՛ նրա օծյալներին, ու հասավ գրեթե ապստամբության:

Այդտեղ արդեն ռաբբի Իփզեֆին խոսելիք չմնաց, և նա այլևս Չեյդին լսել չցանկացավ. նա երկու ձեռքով փակեց ականջները և գոչեց.

— Բավական է: Բավական է: Բավական է:

Երբ Չեյդը վերադարձավ տուն, ռեբ Իփզեֆը խոր հառաչելով դիմեց ամբոխին.

— Խե՛ղճ... հրաշալի երիտասարդ և ազնի՛վ երիտասարդ, և օրինավո՛ր երիտասարդ, բայց... մեզանից հեռու լինի...

Այդ խոսքերն ասելիս նա մատը ճակատին տարավ, և բոլորը հասկացան, թե ինչ էր ուզում ասել...